ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 2-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովսեփ քհն. Ալեքսանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի» (Մատթ. Զ 19) բնաբանով:

***

Այսօր Միացյալ Հայկական Ֆոնդի վարիչ-տնօրեն Հարութ Սասունյանի գլխավորությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ֆոնդի 100-րդ մարդասիրական թռիչքով Հայաստան ժամանած պատվիրակությունը՝ ամերիկահայ և ամերիկյան բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչներ, «Լոս Անջելես թայմս», «Վաշինգտոն թայմս» և ամերիկյան առաջատար այլ թերթերի լրագրողներ:

Պատվիրակությունը Մայր Տաճարում ներկա գտնվեց Սբ. Պատարագի արարողությանը: Հընթացս Ս. Պատարագի, հանուն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի, հյուրերին ողջույնի խոսք ուղղեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Սբ. Պատարագին ներկա էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան Տ. Սեպուհ եպս. Սարգսյանը:

Հավարտ Սբ. Պատարագի հյուրերը շրջեցին Սբ. Էջմիածնի թանգարաններում, մասնակցեցին Վեհարանում կազմակերպված ընդունելությանը:

Օգոստոսի 8-ին, շաբաթ.- Եփեսոսի Ս. Ժողովոյն երկու հարիւր հայրապետացն (431 թ.):

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ուկրաինայի թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը:

Օգոստոսի 9-ին, կիրակի.- Դ. կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը: Պատարագիչ Հայր Սուրբը «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդին պատշաճող քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

Օգոստոսի 11-ին, երեքշաբթի.- Բ. օր Աստուածածնի պահոց:

Եգիպտոսի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի նախաձեռնությամբ ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած մի խումբ եգիպտահայ երեխաներ այսօր կրկին վերադարձան Եգիպտոս՝ Կահիրե և Ալեքսանդրիա:

Օգոստոսի 15-ին, շաբաթ.- Տօն Ծողակաթի Ս. Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:

Այսօր Գերմանիա մեկնեց ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած Բեռլինի և Հյուսիսային Գերմանիայի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը:

Օգոստոսի 16-ին, կիրակի.- Վերափոխումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Պատարագիչ Սրբազանը «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին. երանելի առաքեալքն և սուրբ կուսանքն. քահանայապետքն պայծառացեալք» (Շարական) բնաբանով (Տե՛ս էջ 166):

Ս. Պատարագից հետո կատարվեց խաղողի օրհնության կարգ:

Օգոստոսի 17-ին, երկուշաբթի.- Բ. օր Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

Օգոստոսի 18-ին, երեքշաբթի.- Գ. օր Վերափոխման:

Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Կանադայի թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը:

Օգոստոսի 19-ին, չորեքշաբթի.- Դ. օր Վերափոխման:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին հայազգի ուխտավորներ ԱՄՆ-ից, Լիբանանից, Պարսկաստանից, Թուրքիայից: Ուխտագնացության կազմակերպիչներն են 1700-ամյակի գործադիր մարմնի ուխտագնացությունների

հանձնախմբի ատենապետ գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը և 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը: Ուխտավորները երկշաբաթյա այցելություններով կլինեն Արարատյան Հայրապետական, Արագածոտնի և Շիրակի թեմերում գտնվող ուխտավայրերում, վանքերում ու եկեղեցիներում:

Օգոստոսի 20-ին, հինգշաբթի.- Ե. օր Վերափոխման:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը:

Օգոստոսի 21-ին, ուրբաթ.- Զ. օր Վերափոխման:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Շվեյցարիայի թեմի առաջնորդ Տ. Վիգեն եպս. Այքազյանը, Մայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ, Ավստրալիայի և Նոր Զեղանդիայի առաջնորդ Աղան արքեպս. Պալիոզյանը:

Օգոստոսի 22-ին, շաբաթ.- Է. օր Վերափոխման:

Այսօր Միացյալ Նահանգներից Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Զվարթնոց» օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանները և պաշտոնեությունը:

Մայրավանք հասնելուց հետո, Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առջև, Հայոց Հայրապետին ուղղված ողջույնի խոսք ասաց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Նորին Սրբությունն իր գոհությունն ու գնահատանքն արտահայտեց Մայր Աթոռի միաբանությանն ու Վանական խորհրդին՝ անցնող չորս ամիսների ընթացքում Մայր Աթոռի ընթացիկ գործերը բարեհաջող կառավարելու համար: Վեհափառ Հայրապետը գոհաբանական աղոթք վերառաքեց առ Աստված՝ Հայաստանյայց Եկեղեցու անսասանության և հայ ժողովրդի բարեկեցության համար:

Օգոստոս 23-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք...» բնաբանով (Տե՛ս էջ 96):

«Տէր Ողորմեա»-ից առաջ Վեհափառ Հայրապետին ուղղված բարեմաղթանքի խոսք ասաց ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

Պատարագի դպրաց բաժինը երգում էր Լոս Անջելեսի Ս. Սարգիս եկեղեցու դպրաց դասի «Խաչատուրյան» երգչախմբը, բարեշնորհ Ստեփան սրկ. Կյոզյումյանի ղեկավարությամբ:

***

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Եգիպտոսի թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը:

Օգոստոսի 24-ին, երկուշաբթի.- Թ. օր Վերափոխման:

Այսօր Մայր Աթոռի Վեհարանում, Ամենայն Հայոց Գարեգին Առաջին Կաթողիկոսի նախագահությամբ և Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վազգեն արքեպս. Հովսեփյանի, Եգիպտոսի թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի ատենապետությամբ, իր աշխատանքներն սկսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստը:

Նորին Սրբությունը ժողովականներին իր գնահատանքն արտահայտեց՝ վանական խորհրդի անցնող չորս ամիսների ընթացքում Մայր Աթոռի ընթացիկ գործերը բարվոք կառավարելու համար:

Օգոստոսի 26-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Մայր Աթոռից Ամերիկայի Միացյալ Նահանգներ մեկնեց ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը:

Օգոստոսի 27-ին, հինգշաբթի.- Սրբոյն Երեմիայի մարգարէին:

Այսօր, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր Աթոռի բոլոր միաբանները Վեհարանում մասնակցեցին Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի ծննդյան 66-րդ տարեդարձի առիթով կազմակերպված հանդիսությանը:

Օգոստոսի 29-ին, շաբաթ.- Սրբոց առաքելոցն՝ Թովմայի, Յակոբայ եւ Եմաւ ոնի:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ֆինլանդիայի խորհրդարանի պատվիրակությունը՝ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Մարկուս Աալտոնենի գլխավորությամբ:

Ողջունելով հյուրերին, Նորին Սրբությունն Գարեգին Ա Կաթողիկոսը վերհիշեց իր էկումենիկ այցելությունը Ֆինլանդիա՝ Լյութերական Եկեղեցու արքեպիսկոպոս Ուինքստոնի հրավերով: Վեհափառ Հայրապետը հայտնեց նաև նոյեմբեր ամսին Ֆինլանդիա կատարելիք հնարավոր այցի մասին՝ Ֆինլանդիայում բացվող «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսի առիթով:

Կոչ անելով համագործակցության, Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի աշխատանքները, որտեղ համագործակցության առաջին քայլերը ֆինների հետ արդեն նախանշվում են:

Հյուրերի խնդրանքով Վեհափառ Հայրապետը անդրադարձավ Հայ Առաքելական Եկեղեցու պատմությանն ու դավանանքին, մյուս Եկեղեցիների հետ Հայ Եկեղեցու ունեցած հարաբերություններին:

Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Հայաստան ներթափանցած աղանդների գործունեությանը, որոնք, արհամարհելով հայ ժողովրդի կրոնական զգացումները, փորձում են մարդորսությամբ զբաղվել:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև դարաբաղյան հիմնահարցի շուրջ:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ռուսաստանի Պետդումայի պատգամավոր, Պետդումայի անվտանգության հանձնախմբի փոխնախագահ

Սահակ Կարապետյանը՝ Ռոստովի հայ համայնքի նախագահ Էդվարդ Վարդանյանի ընկերակցությամբ:

Հյուրերը Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին ներկայացրին ռոստովահայ համայնքի աշխույժ գործունեությունը:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց նրանց նվիրյալ աշխատանքը և հորդորեց շարունակական կապ պահպանել Հայաստանի հետ, Հայոց առաջնորդարանի միջոցով առավել սերտացնել հարաբերությունները Մայր Աթոռի հետ, օգտվել Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հրատարակություններից:

Հանդիպման ավարտին հյուրերը Վեհափառ Հայրապետին նվիրեցին բյուրեղապակյա մի գուրգ: Իր հերթին, Վեհափառ Հայրապետը հյուրերին նվիրեց հուշանվերներ:

⁂

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ութ շրջանավարտ սարկավագների քահանայական կոչման արարողությունը՝ նախագահությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի:

Օգոստոսի 30-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Վերափոխման: Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ Մատուցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Հընթացս Ս. Պատարագի կատարվեց Արմեն, Հարություն, Արտակ, Արարատ, Հարություն, Հրանտ, Արմեն սարկավագների քահանայական ձեռնադրությունը՝ ձեռամբ պատարագիչ Սրբազան Հոր և խարտավիլակությամբ Մայր Աթոռի միաբան Հայր Մակար աբեղա Հովհաննիսյանի: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց և նորընծա քահանաներին իր պատգամի խոսքը ուղղեց պատարագիչ Սրբազանը:

Երեկոյան ժամերգությունից հետո կատարվեց նորընծա Տ. Թորգոմ աբդ. Տոնիկյանի վեղարի տվչության կարգը՝ ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանի (Տե՛ս էջ 226):

⁂

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Իրաքում Դոմինիկյան միաբանության մեծավոր, «Քրիստոնեական միտք» ամսագրի գլխավոր խմբագիր, Իրաքում Բաբիլոնի անվան աստվածաբանական համալսարանի փիլիսոփայության բաժնի ամբիոնի վարիչ Հայր Ցուսուֆ Թովմա-Մարկոսը: Հայր Ցուսուֆ Թովմա-Մարկոսի՝ Մայր Աթոռ այցելության նպատակն է պատմական որոշ տեղեկություններ հավաքել հայերի Իրաքում գործունեության, հայ-ասորական հարաբերությունների, Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի շրջանակներում կատարվող տոնակատարությունների մասին:

Նշելի է նաև, որ Հայր Ցուսուֆ Թովմա-Մարկոսին ընկերակցում է Հայաստանում Ս. Գրոց ընկերության բաժնի տնօրեն Պատվելի Թոմ Հնգլինդը:

Սեպտեմբերի 1-ին, երեքշաբթի.- Սրբոց մարգարէիցն Եզեկիէլի, Եզրի եւ Զաքարիայի՝ հօրն Յովհաննու Մկրտչի:

Այսօր Ֆրանսիայի Հոտ-դ'Ազյուր շրջանի /Նիցցայի և նրա շրջակայքի/ հայոց հոգոր հովիվ Տ. Նարեկ եպս. Ծաքարյանի ուղեկցությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց շրջանի միջեկեղեցական խումբը՝ կազմված ֆրանսիական ռեֆորմիստական ու կաթոլիկ, Ֆրանսիայում անգլիկան, դանիական լյութերական Եկեղեցիների ներկայացուցիչներից:

Հայաստանում Քրիստոնեության հաստատման 1700-ամյակի առիթով էկումենիկ այս այցելության նպատակն է՝ ծանոթանալ Հայ Առաքելական Եկեղեցուն ու Հայաստանին, եղբայրական կապեր հաստատել Հայ Եկեղեցու հետ:

Ողջունելով հյուրերին, Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը պատմեց Հայ Առաքելական Եկեղեցու, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի, նրա ներկայիս գործունեության մասին, ներկայացրեց Ս. Էջմիածնի կրթական, հոգևոր դաստիարակության քարոզչական աշխատանքները և սոցիալական ծրագրերը:

Կարևորելով միջեկեղեցական հարաբերությունները, Վեհափառ Հայրապետը մասնավորապես անդրադարձավ Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ ու Հայ Ավետարանական Եկեղեցիների միջև եղբայրական հարաբերություններին, քրիստոնյա այլ Եկեղեցիների հետ ունեցած կապերին:

Հանդիպման ընթացքում հյուրերը Վեհափառ Հայրապետին նվիրեցին օրերս Ֆրանսիայում լույս տեսած «Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս» գիրքը:

Սեպտեմբերի 2-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր, Ամենայն Հայոց Գարեգին Առաջին Կաթողիկոսի չորսամյա բացակայությունից հետո, Վեհարանում տեղի ունեցավ առաջին միաբանական ժողովը: Վեհափառ Հայրապետը միաբաններին պատմեց ԱՄՆ-ում Հայոց թեմի հիմնադրման 100-ամյակի առթիվ կատարված տոնախմբությունների ու միջոցառումների մասին: Այնուհետև Եգիպտահայոց թեմի առաջնորդ Զավեն արքեպս. Չինչինյանը խոսեց թեմի և այնտեղ կատարվող աշխատանքների մասին:

Սեպտեմբերի 4-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Ուրուգվայի Արելյան Հանրապետության Գլխավոր վեհաժողովի Ներկայացուցիչների պալատի նախագահ Խայմե Մարիո Տրոբոյի գլխավորած պատվիրակությունը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանի, Հայաստանում Ուրուգվայի Հանրապետության դեսպանի ուղեկցությամբ: Պատվիրակությանն ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը:

Ողջունելով հյուրերին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատմեց նրանց Հայ Առաքելական Եկեղեցու նրա հոգոր կենտրոն Սբ. Էջմիածնի մասին, անդրադարձավ Մայր Աթոռի ներկայիս գործունեությանը, մասնավորապես հոգևոր դաստիարակության ու սոցիալական ծրագրերին:

Մեծ նշանակություն տալով Հայաստանի և Ուրուգվայի փոխադարձ տնտեսական օգնությանը, սերտ համագործակցությանը, փոխհարաբերությունների ամրապնդման նպատակով գաղափարների և փորձի փոխանակմանը, Վեհափառ Հայրապետը կարևորեց երկու ազգերի համերաշխությունը և բարեկամությունը:

«Փոքր ազգերը միանալով կմեծանան, կզորացնեն միմյանց, իսկ մեծերը բաժանվելով՝ կփոքրանան», - շեշտեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը երախտագիտությամբ նշեց, որ Ուրուգվայն առաջին երկիրն էր, որ պաշտոնապես ճանաչեց 1915 թ. Օսմանյան կայսրությունում իրագործված հայերի ցեղասպանությունը, հետագայում նրա օրինակին հետևեցին այլ երկրներ:

Պարոն Տրոբոն, իր հերթին մեծ նշանակություն տալով երկու երկրների համագործակցությանը, հույս հայտնեց, որ այսուհետ էլ ավելի կզարգանան կապերը նաև երկու երկրների խորհրդարանական կառույցների միջև:

Հանդիպման ավարտին հյուրերը շրջեցին Մայր Աթոռի թանգարաններում:

Սեպտեմբերի 6-ին, կիրակի.- Դ. կիրակի զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Ներսեհ աբեղա Խալաթյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Ամենայն Գիրք աստուածաշունչք եւ օգտակարք ի վարդապետութիւն են եւ ի յանդիմանութիւն եւ յուղղութիւն եւ ի խրատ արդարութեան, զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հաստատեալ» (Բ Տիմոթեոս Գ 16) բնաբանով:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

Սեպտեմբերի 7-ին, երկուշաբթի.- Ա. օր Խաչի պահոց:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Միացյալ Ազգերի փախստականների գծով գերագույն հանձնակատարի Եվրոպայի գրասենյակի տնօրեն Ան Վիլհելմ Բիլլեդին և երևանյան մասնաճյուղի ներկայացուցիչ Թոմաս Բիրաթին՝ Հայաստանի Հանրապետության Սոցիալական ապահովության նախարարի տեղակալ Դավիթ Հակոբյանի և Փախստականների ու բնակչության տեղաշարժերի վարչության պետ Մեխակ Գաբրիելյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց հայ փախստականների, մասնավորապես ղարաբաղյան հակամարտության ընթացքում Ադրբեջանից գաղթած հայերին կազմակերպության կողմից ցուցաբերվող օգնության ծրագրերի մասին, ինչպես նաև փախստականների քաղաքացիության և բնակարանային խնդիրների շուրջ:

Ինչպես Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց պրն. Հակոբյանը, Հայաստանի կառավարությունը սերտորեն համագործակցում է ՄԱԿ-ի վերոհիշյալ ծրագրի հետ և մինչ 2001 թվականը նախատեսում է լուծել փախստականների բնակարանային հարցերը:

***

Նույն օրը Մայր Աթոռից Կահիրե մեկնեց Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը:

Սեպտեմբերի 8-ին, երեքշաբթի.- Բ. օր Խաչի պահոց: Տօն ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ:

Այսօր, երեկոյան, Վեհափառ Հայրապետը Վեհարանում Մայր Աթոռի

միաբան սարկավագների հետ զրույց ունեցավ Հայաստանի Հանրապետության Պետական բանակում նրանց ծառայության վերաբերյալ: Զրույցին ներկա էին Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը և Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանը:

Սեպտեմբերի 9-ին, չորեքշաբթի.- Գ. օր Խաչի պահոց:

Այսօր Վեհարանում տեղի ունեցավ Միաբանական ժողով, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը խոսեց երիտասարդությանը հուզող հարցերի մասին: Այս և երիտասարդությանը Եկեղեցուն առավել մոտեցնելու խնդիրների վերաբերյալ իրենց մտածումները հայտնեցին նաև միաբանները:

Սեպտեմբերի 10-ին, հինգշաբթի.- Դ. օր Խաչի պահոց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ 1998-99 ուսումնական տարվա բացման հանդիսությունը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի (Տե՛ս էջ 217):

Սեպտեմբերի 11-ին, ուրբաթ.- Ե. օր Խաչի պահոց:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կիպրոսի Հանրապետության արտգործնախարար Իոաննիս Կասուլիդեսի գլխավորած պատվիրակությանը՝ Կիպրոսում Հայաստանի Հանրապետության դեսպան Արման Կիրակոսյանի ուղեկցությամբ: Պատվիրակության կազմում էին Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանում Կիպրոսի դեսպան Պլատոն Կիրիակիդեսը, Կիպրոսի արտգործնախարարության աշխատակիցներ, ներկայացուցիչներ Կիպրոսի հայ համայնքից:

Հանդիպման ընթացքում խոսվեց հայ և հույն ժողովուրդների պատմական միանման ճակատագրերի մասին, որի առիթով նշվեց Սփյուռքում, մասնավորապես եվրոպական Սփյուռքում նրանց համագործակցության անհրաժեշտության մասին՝ ի շահ մայր երկրների իրավունքների:

Վեհափառ Հայրապետը պրն. Կասուլիդեսին հայտնեց ԾՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն պրն. Մայորին հղած իր նամակի մասին, որտեղ Նորին Սրբությունը խնդրում էր պրն. Մայորի միջամտությունը՝ Կիպրոսի գրավյալ տարածքում գտնվող Սբ. Մակար հայկական պատմական եկեղեցին հյուրանոցի վերածելու թուրքական իշխանությունների ծրագրի արգելման համար:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը հյուրերին նվիրեց այս տարի Աթենքում կայացած «Հայաստանի գանձերը» ցուցահանդեսի պատկերազարդ կատալոգներ:

Նույն օրը, երեկոյան, Մայր Աթոռ ժամանեց Ֆրեզնոյի (Ամերիկայի Արևմտյան թեմ) հոգևոր հովիվ Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը:

Սեպտեմբերի 13-ին, կիրակի.- ԽԱՉՎԵՐԱՑ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան, Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության

ֆակուլտետի դեկան Շահե արքեպս. Աճեմյանը: Ս. Պատարագին վերաբերում կատարեց Տ. Անուշավան աբեղա Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Եւ ապա երևեսցի նշան Որդւոյ Մարդոյ յերկինս» (Մատթ. ԻԴ 30) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

Այսօր, երեկոյան ժամերգությունից առաջ, Մայր Աթոռի միաբան, Ֆրեզնոյի հոգևոր հովիվ Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանի նախագահությամբ կատարվեց Անդաստան, որից հետո ոհեհաններով զարդարված Ս. Խաչը դուրս հանվեց Տաճարի բակ և «Խաչի Քո Քրիստոս երկրպագեմք» շարականի երգեցողությամբ, հանդիսավոր թափոր կազմած, պտտեցվեց Մայր Տաճարի շուրջը:

Սեպտեմբերի 14-ին, երկուշաբթի.- Տօն է Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Անուշավան աբեղա Ժամկոչյանը:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Սեպտեմբերի 15-ին, երեքշաբթի.- Տօն է Եկեղեցւոյ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը:

Սեպտեմբերի 16-ին, չորեքշաբթի.- Պահք: Տօն է Եկեղեցւոյ:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց նախորդ օրը Երևանում սկսված «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը» միջազգային գիտաժողովի արտասահմանյան մասնակիցներին:

Ողջունելով հյուրերին, Վեհափառ Հայրապետը ներկաներին հրավիրեց անկաշկանդ զրույցի՝ Հայաստանում քրիստոնեության 1700-ամյա հոբելյանը նորանոր գործերով արժևորելու հարցերի շուրջ:

Նորին Սրբությունը տեղեկացրեց Մայր Աթոռում պահվող շուրջ 600 ձեռագիր մատյանների պահպանման և ուսումնասիրման, դրանց հրատարակման աշխատանքների մասին: Հյուրերի խնդրանքով Վեհափառ Հայրապետը անդրադարձավ նաև 1700-ամյա հոբելյանին նվիրված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հրատարակչական, եկեղեցաշինական և մյուս ծրագրերին:

Ընդգծելով հայագիտության ասպարեզում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերը, հյուրերը մատնանշեցին, որ այսօր Գևորգյան հոգևոր Ճեմարանի սաներն իրենց աստվածաբանական գիտելիքներով կարող են մեծ ավանդ ունենալ հայագիտության զարգացման գործում:

Հանդիպման ավարտին հյուրերը եղան Մայր Աթոռի թանգարաններում, ապա Վեհափառ Հայրապետի հետ մեկտեղ մեկնեցին Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց դպրատուն:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ Միաբանական ժողով, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը խոսեց արտասահմանում լույս տեսած հայագիտական մի քանի ուսումնասիրությունների մասին:

Խաժակ Սրբազանը միաբաններին հանգամանորեն ներկայացրեց ԱՄՆ-ում Հայոց թեմի հիմնադրման 100-ամյակի կապակցությամբ կազմակերպված հանդիսությունների ու միջոցառումների ընթացքին:

Ֆրեզնոյի հոգևոր հովիվ Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը միաբանների հետ կիսեց համայնքային կյանքում ունեցած իր հովվական փորձառությունները:

Սեպտեմբերի 19-ին, շաբաթ.- Տօն է Խաչի:

Այսօր, երեկոյան ժամերգությունից հետո, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 9 շրջանավարտ սաներ, ձեռամբ Մայր Աթոռի Լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվեցին կիսասարկավագ:

Սեպտեմբերի 20-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը: Ս. Պատարագի ընթացքում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 11 շրջանավարտ սաներ, ձեռամբ Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Արրահամ եպս. Մկրտչյանի, ձեռնադրվեցին սարկավագ: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (Տես էջ 244):

Սեպտեմբերի 22-ին, երեքշաբթի.- Պահք: Սրբոց կուսանացն Փեփրոնեայ, Մարիանեայ եւ Ծուշանայ՝ դստերն Մեծին Վարդանայ:

Այսօր, երեկոյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց ԱՄՆ:

Սեպտեմբերի 26-ին Վեհափառ Հայրապետը ներկա կգտնվի Միացյալ Հայկական Ֆոնդի 100-րդ թռիչքի առիթով Լոս Անջելեսում կազմակերպվող ճաշկերույթին և իր հայրապետական պատգամը կփոխանցի ներկաներին:

Մինչ Կալիֆոռնիա մեկնելը Նորին Սրբությունը Նյու Յորքում մեկ անգամ ևս բժշկական քննություն կանցնի:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում է Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանը:

Սեպտեմբերի 27-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Սրբոյ Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ֆրեզնոյի հոգևոր հովիվ Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը: Հայր մեր-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ Մարդոյ յերկինս, եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք» (Մատթ. ԻԴ 30) բնաբանով (Տե՛ս էջ 173):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ «վասն հանգուցելոց»: